

ԿԵՆՂԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈւՏԴ 592/599

Հ. Զ. Գրիգորյան

Կենդանիների կարգաբանական անվանումների համակարգման անհրաժեշտությունը հայերենում

(Ներկայացված է ակադեմիկոս Ս. Հ. Մովսիսյանի կողմից 1/XI 2002)

Ժամանակակից կենդանաբանական կարգաբանությունը հիմնված է էվոլյուցիոն (պատմական զարգացման) սկզբունքի վրա, ցույց է տալիս կենդանիների ազգակցական կապերը կենդանական աշխարհի համակարգում: Հետևաբար կենդանիների կարգաբանական անվանումները պետք է ճիշտ արտահայտեն նրանց պատկանելությունը տվյալ տաքսոնոմիական խմբին (տիպ, դաս, կարգ և այլն), որն էլ իր հերթին ցույց է տալիս կենդանիների էվոլյուցիոն զարգացման աստիճանը: Այսպիսով տաքսոնոմիական միավորների ճիշտ անվանումը կարևոր կենսաբանական նշանակություն ունի:

Ինչպես հայտնի է, կարգաբանության հիմնական լեզուն լատիներենն է: Լատիներենում ընդունված է տաքսոնոմիական տերմիններն անվանել կարգաբանական լեզվում ընդունված որոշակի վերջածանցներով կամ վերջավորություններով, ինչը և ցույց է տալիս կենդանու պատկանելությունը տվյալ կարգաբանական խմբին: Այսպես, տիպի անունն ունի -a վերջավորությունը (Protozoa, Arthropoda, Vertebrata), կարգինը՝ -formes (Cyprini-formes), ենթակարգինը՝ -oidei (Cyprinoidei), ընտանիքինը -idae (Cyprinidae), ցեղինը՝ հիմնականում -us (Cyprinus): Ռուսերենում այս սկզբունքը պահպանվում է: Օրինակ՝ կարգն արտահայտվում է -образные վերջածանցով (Карпообразные), ենթակարգը՝ -видные (Карповидные), ընտանիքը՝ -овые կամ -евые (Карповые, Сельдевые), ցեղը՝ պարզապես հոգնակի թվով և այլն:

Հայերենում կենդանիների կարգաբանական անվանումների մեջ խառնաշփոթություն է տիրում: Միննույն վերջածանցը տրվում է տարբեր կարգաբանական խմբերին: Այսպես, մի դեպքում անվանում են «կարգ ճնճղուկազգիներ», «կարգ կռունկազգիներ» [1,2], մի այլ դեպքում՝ «ընտանիք շնագզիներ», «ընտանիք կատվազգիներ», «ընտանիք մկնագզիներ» [1-4]: Մեկ այլ օրինակ, -կերպեր վերջածանցով անվանում են և՛ կարգը (տառեխակերպեր, ծածանակերպեր, նապաստակակերպեր և այլն) [5], և՛ ենթակարգը (ծածանակերպեր և այլն) [2]: Կամ՝ -նմաններ վերջածանցով արտահայտված է և՛ կարգը (օր.՝ նապաստականմաններ), և՛ ենթակարգը (օր.՝ տափակաձկնանմաններ) [1], հոգնակի թվով՝ և՛ կարգը, և՛ ընտանիքը, և՛ ենթաընտանիքը [3]:

Նկատվում է նաև հետևյալ երևույթը. Միևնույն տաքսոնոմիական անվանումը տարբեր հեղինակներ արտահայտում են տարբեր վերջածանցներով, օրինակ՝ կարգն արտահայտված է հետևյալ վերջածանցներով, *-նմաններ* [6], *-կերպեր* [5], *-ազգիներ*, *-այիններ* կամ հոգնակի թվով [1, 2].

Այս պատճառով միևնույն կարգաբանական խմբին տարբեր գրականության մեջ տարբեր անվանումներ են տրվում, ինչպես օրինակ՝ կարգ ճնճողականմաններ, կարգ ճնճողկազգիներ, կարգ ճեճողկայիններ, կարգ ճնճողկակերպեր և կարգ ճնճողկներ:

Խառնաշփոթությունն, անհետևողականությունն է նկատվում նաև նույն հեղինակի մոտ. միևնույն կարգաբանական խումբն արտահայտվում է տարբեր վերջածանցներով: Այսպես, Ս. Նաումովի «Ողնաշարավորների կենդանաբանություն» դասագրքի հայերեն թարգմանության մեջ տրված է. «կարգ շնաձկներ», «կարգ ճնճողկազգիներ», «կարգ փայտփորայիններ», «կարգ կիպսեդանմաններ» և այլն, «ընտանիք շներ», «ընտանիք սկյուռալիններ», «ընտանիք մկնազգիներ»: Ռ. Ս. Ղազարյանը գրում է. «կարգ ձողաձկնակերպներ», «կարգ թութականմաններ», «կարգ փայտփորազգիներ», «կարգ կտցարներ», «կարգ սիրենայիններ» և այլն [1]: Դպրոցական դասագրքում [4] նշված է. «կարգ սաղմոսանմաններ», «կարգ արագիլանմաններ», «կարգ նապաստականմաններ» և այլն, միաժամանակ՝ «կարգ լերկաձկներ», «կարգ տափակաձկներ», «կարգ շնաձկներ» և այլն: Ս. Համբարյանի դասագրքում (2002թ.) կարգի անունը ներկայացված է *-կերպեր* և *-նմաններ* վերջածանցներով (օր՝ նապաստակակերպեր, կետանմաններ), ընտանիքը՝ կա՛մ *-այիններ* վերջածանցով, կա՛մ հոգնակի թվով (շնայիններ, կատվայիններ, կզաքիսներ): Իսկ Խ. Ա. Զաքարյանը նույնիսկ գրում է. «ծածանակերպերի կամ ոսկրափամփշտայինների կարգ», «փշալողակների կարգ», «տափակաձկնայինների կարգ» և այլն [8]:

Այս իրավիճակը հաշվի առնելով, որոշակիություն և հստակություն ենք մտցրել հայերեն կենդանաբանական լեզվի մեջ, կարգաբանական միավորների վերջածանցները համակարգելով, ինչպես դա ընդունված է լատիներենում, ռուսերենում [7, 9] և այլ լեզուներում: Համաձայնեցնելով լատիներենին և ռուսերենին, կարգի անվանման վերջածանցը նպատակահարմար է, որ լինի *-կերպեր* (*-formes, -образные*), ենթակարգինը՝ *-նմաններ* (*-oidei, -видные*), ընտանիքը՝ *-այիներ* (*-idae, -овые, -евые*): Եթե կարգի անունը կապված է կենդանու որևէ օրգանի հետ (կնճիթ, կճղակ, սմբակ), *-կերպի* փոխարեն պետք է ավելացվի *-ավոր* վերջածանցը, օրինակ՝ կնճիթավոր, կճղակավոր և այլն: Եթե կարգի կամ ընտանիքի անվանումն արտահայտում է կենդանու որևէ հատկանիշ, օրինակ՝ գիշատիչ, կոռան, կրծող, ապա այս դեպքում անունը տրվում է հոգնակի թվով, գիշատիչներ, կոռաններ, կրծողներ:

Եթե ընտանիքի անունը բաղկացած է երկու արմատից, և դրանցից երկրորդը ցույց է տալիս որևէ հատկանիշ, ապա ոչ մի վերջածանց չի ավելանում, միայն դրվում է հոգնակի թվով: Այսպես, ընտանիք *անձրուկներ լուսատու* (բայց՝ ընտանիք *անձրուկայիններ*), ընտանիք *օձաձկներ էլեկտրական* (ընտանիք *օձաձկնայիններ*):

Նմանատիպ բացառություններ կան նաև լատիներենում և ռուսերենում:

Կենդանիների մյուս կարգաբանական միավորները թողնված են հոգնակի թվով:

Նշենք, որ գրականության մեջ, բացի թռչուններից, բոլոր կենդանիների ցեղերը տրված են հոգնակի թվով: Քանի որ ցեղն ընդգրկում է մի խումբ կենդանիներ, ճիշտ ենք համարում, որ թռչունների այս կարգաբանական միավորը նույնպես լինի հոգնակի:

Այսպիսով, միասնականություն, հստակություն ենք մտցրել հայերեն կենդանաբանական լեզվի մեջ՝ ընդհանուր հայտարարի բերելով անուշադրության մատնված կարգաբանական անվանումները, ճշտել ենք կարգերի, ենթակարգերի, ընտանիքների և այլ տաքսոնների վերջածանցները, դրանք համաձայնեցնելով լատիներենին և ռուսերենին:

ՀՀ ԳԱՍ կենդանաբանության ինստիտուտ

А.Дж. Григорян

**Необходимость систематизирования таксономических наименований
животных в армянском языке**

В статье проведен сравнительный анализ таксономических терминов позвоночных животных и в единую, четкую систему приведены суффиксы классов, отрядов, подотрядов, семейств, видов и родов, как это принято в латинском, русском и других языках.

Գրականություն

1. *Ղազարյան Ռ.Ս.* Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան: Գիրք Ա-Դ, Երևան, 1992-2000:
2. *Նաումով Ս.Պ.* Ողնաշարավորների կենդանաբանություն: Պրակ. I, Երևան, 1956, Պրակ. II, Հայպետուսմանկիրատ, Երևան, 1958 (թարգ, ռուսերենից):
3. *Մելքումյան Լ. Ս.* Կենդանաբանություն կենդանիների էկոլոգիայի հիմունքներով (քորդավորներ): Ուս. ձեռնարկ, Երևան, 1988:
4. *Ջիվանյան Կ.Ա., Դանիելյան Ֆ.Դ., Ռուխկյան Ռ.Հ., Յավրույան Է.Գ.* Կենսաբանության: Կենդանիներ (դասագիրք հանրակրթական դպր. 7-րդ դաս. համար): Երևան, Մակմիլան-Արմենիա, 2000:
5. *Համբարյան Մ.Ե.* Ողնաշարավորների կենդանաբանություն: 3-4 հատ., Երևան, 1999-2002:
6. *Աղամյան Ս.Ս.* Հայաստանի թռչունները: Կ.գ.դ. գիտական հայցման ատենախոսություն: Երևան, 1999:
7. Жизнь животных. Т. 4-7. М. Просвещение. 1983-1989.
8. *Ջաֆարյան Խ.Ա.* Ողնաշարավորների կենդանաբանություն: Ուս. ձեռնարկ, Երևան, 1979:
9. *Соколов В.Е.* Пятизначный словарь названий животных. М. Русский язык. 1984.